ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կատարող՝ _____ Մանուկյան Ռեբեկա Գագիկի

Ստորագրություն անուն, ազգանուն, հայրանուն

Ղեկավար՝ _____ Սարգսյան Շողիկմ.գ.թ., դոցենտ

Ստորագրություն անուն, ազգանուն, գիտ. աստիճան, կոչում

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն _____ 2
Ներածություն _____ 3
Քերականության մեթոդիկա
1. Քերականության տեղն ու դերը հայոց լեզվի տարրական ուսուց-
ման համակարգում: _____7
2. Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման մեթոդներն ու
եղանակները: _____10
Եզրակացություն _____16
Օգտագործած գրականության ցանկ _____20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը–Այժմ նպաստավոր պայմաններ են ստեղծվել քերականության ուսուցման տարրական համակարգը բարելավելու համար, քանի որ ժամանակակից կրթական համակարգն ուղղված է ինտելեկտուալ, զարգացած անհատի ձևավորմանը, որը չի իրականանա առանց գրական, անթերի ու գրագետ խոսք ունենալու, որին նպաստում է նաև ձևաբանական տարրական գիտելիքների իմացությունը:

Տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրում նախատեսված չէ խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրություն: Սակայն աշակերտները պետք է ձեռք բերեն տարրական գիտելիքներ նաև ձևաբանությունից, որպեսզի բարձր դասարաններում համակարգված քերականության ուսումնասիրման համար անհրաժեշտ հիմք ստեղծվի:

Հետազոտության նպատակը և խնդիրները–Ուսումնական պրակտիկայի ընթացքում մեր խնդիրն է եղել՝ ուսումնասիրել հայկական դպրոցի տարրական դասարաններում քերականության ուսուցման, տվյալ դեպքում՝ ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցման վիճակը, բացահայտել թերություններն ու բացերը, վերլուծել ու ցույց տալ դրանց պատճառները, օգնել դրանք հաղթահարելու գործում: Այժմ նպաստավոր պայմաններ են ստեղծվել քերականության ուսուցման տարրական համակարգը բարելավելու համար, քանի որ ժամանակակից կրթական համակարգը ուղղված է ինտելեկտուալ, զարգացած անհատի ձևավորմանը, որն օժտված է աշխարհի ամբողջական պատկերի ընկալմամբ ու գործընթացների միջև կապերը խորությամբ հասկանալու կարողությամբ, իսկ սրանք իրականություն չեն դառնա առանց գրագետ ու անթերի խոսք ունենալու:

Տեղին է հնչում Սուխոմլինսկու խոսքը. «Տարրական դասարանները համարվում են հիմքերի հիմք»: [14, էջ 108-109] Գործնական աշխատանքի փորձը ցույց տվեց, որ այստեղ կարևորագույն խնդիրն է ոչ միայն աշակերտներին տալ կայուն գիտելիքների ու կարողությունների որոշակի շրջանակ, այլ նաև հարուստ հոգևոր կյանք: Այսինքն՝ մեր դասվարները պետք է լինեն ոչ միայն գիտելիքներ ուսուցանողներ, այլև՝ լավ դաստիարակներ, կյանքի ուսուցիչներ, ուսուցման տարիներին երեխաներին հաստնեն բարոյական, հուզական, ֆիզիկական, գեղագիտական, ինտելեկտուալ զարգացման:

Այսպիսով՝ ուսումը լինի հարուստ հոգևոր կյանքի մի մասնիկը, կյանք, որը նպաստի երեխայի զարգացմանը, նրա մտքի հարստացմանը:

«Անձի ձևավորման առաջին քայլերը թեև շատ ավելի վաղ են սաղմնավորվում, այնուամենայնիվ, դրա համար ամենալուրջ նախադրյալը կրտսեր դպրոցն է՝ որպես հասարակական միջավայրի, ուր հնարավոր է կազմակերպել անհատի ձևավորման գործընթացը: Գրագետ մարդ դաստիարակելու գործում խիստ էական է կրտսեր դպրոցի և հատկապես ուսուցչի դերը»: [Նախաշավիղ, 2.2012, էջ 20]

Մանրամասն ուսումնասիրելով գործնական աշխատանքի տվյալները, գործու-նեության մեջ եղած ուսումնական նյութերը՝ տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրերը, դասագրքերն ու մեթոդական գրականութունը, այդ թվում նաև ձևաբանու-թյան ուսուցման վերաբերյալ մեթոդիկայի պատմությունը՝ մեր ձեռքի տակ անհրաժեշտ հիմքեր ունեցանք ձևաբանության ուսուցման հարցերը բարելավելու համար: Այդ ուսումնասիրության արդյունքներն ունեցել են ինչպես գործնական այնպես էլ տեսական նշանակություն՝ ձևաբանական ուսուցման աշխատանքները է՛լ ավելի նպատակային դարձնելու համար:

Աշխատանքի խնդիրներն են՝

1. Քերականության տեղի ու դերի ներկայացումը հայոց լեզվի տարրական ուսուցման համակարգում:
2. Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման մեթոդների ու եղանակների ուսումնասիրումը:
3. Խոսքի մասերի ուսուցումը՝ գոյական անվան, բայի, ածական անվան, թվականի, անձնական դերանվան, դրանց որոշ առանձնահատկությունների ուսուցումը:
4. Խոսքի մասերի ուսուցումը պիտի նպաստեն աշակերտների բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:
5. Ուսուցման այս փուլում հիմնավոր աշխատանք է տարվում նաև ձեռք բերված լեզվական գիտելիքները կապակցված խոսքում օգտագործելու ուղղությամբ:
6. Ուսուցման ընթացքում մեծ տեղ տալ գործնական աշխատանքների կատարմանը:

Գործնական աշխատանքի տվյալները հավաքել ենք դասալսումների, գրավոր աշխատանքների և ուսուցիչների ու աշակերտների հետ անցկացված զրույցների միջոցով:

Հրապարակի վրա բավականաչափ ուսումնասիրություններ կան քերականության՝ ձևաբանական տարրական դասընթացի ստեղծման ու մշակման գործում, դրա օրինաչափությունների բացահայտման և ուսուցման վերաբերյալ: Օրինակ՝ Ա. Տեր-Գրիգորյանի, Գ. Էդիլյանի, Ս. Գյուլբուդաղյանի, Ա. Ղարիբյանի և այլոց [16, 9, 7, 10] ուսումնասիրություններն ու աշխատությունները նվիրված են տարրական դասարան-ներում քերականության դասընթացի ձևավորման և ուսուցման մեթոդական առանձ-նահատկություններին:

Այս աշխատությունները պատմական նշանակություն ունեն մեզ համար, սրանց հիման վրա այսօր շատ քերականների ու մանկավարժների կողմից մշակվում են նոր (արդիական) ժամանակի հետ համահունչ մեթոդական միջոցներ ու եղանակներ, ըստ ուսուցման տարբեր օղակների առաջադրվել են ավելի մատչելի ու արդյունավետ ձևեր: Քերականության ուսուցման հարցերին նվիրված այս բավական ծավալուն ու տարաբնույթ նյութերից մենք կարող ենք առանձնացնել պրոֆ. Ա Տեր-Գրիգորյանի, դոցենտ Ս.Գ. Խաչատրյանի, դոցենտ Ջ. Գյուլամիրյանի աշխատությունները, որոնք ուղղակիորեն կապվում են ուսուցման կազմակերպման, նրա նպատակայնության և արդյունավետության բարձրացման հետ:

Առաջադրված ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցման մեթոդների և եղանակների գործադրումը, որոնք են՝ **վերլուծական - համադրական, համագոր-ծակցային և փոխգործուն մեթոդները, ինդուկտիվ և դեդուկտիվ եղանակները.** սրանք տարրական դասարաններում կբարձրացնեն նրա գործնական արժեքն ու արդյունավետությունը, ճիշտ և նպատակային ձևով կօգտագործեն կրտսեր դպրոցա-կանների ընկալման, մտապահման և սովորած գիտելիքները գործնական կարողու-թյունների վերածելու օպտիմալ հնարավորությունները:

Ավարտական աշխատանքի ծավալը և կառուցվածքը:

Պաշտպանության ներկայացվող ավարտական աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային շարվածքով 49 էջ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, և օգտագործած գրականության ցանկից: Ընդ որում՝ առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից՝ «Քերականության տեղն ու դերը հայոց լեզվի տարրական ուսուցման համակարգում», «Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման մեթոդներն ու եղանակները» Երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից՝ «Գոյական անվան ուսուցումը», «Բայի ուսուցումը», «Ածական անուն,

թվական անուն. դրանց ուսուցումը», «Դերանվան, անձնական դերանվան ուսուցումը և ձևաբանական գիտելիքներն ամփոփող դասի պլանից»:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

1. Քերականության տեղն ու դերը հայոց լեզվի տարրական ուսուց-ման համակարգում

Տարրական դասարաններում հայոց լեզվի ուսումնասիրման նպատակը կրտսեր դպրոցականների բառապաշարի մաքրումն ու հարստացումն է, խոսքի հղկումն է ու զարգացումը, արտահայտվելիք մտքին համարժեք բառեր ընտրելու, դրանք ուղղախոսության կանոններին համապատասխան գրելու և կապակցված խոսք (բանավոր և գրավոր) կառուցելու կարողության մշակումը:

Բնականաբար, այս խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է առանց քերականական անհրաժեշտ գիտելիքների իմացության և դրանք խոսքում օգտա-գործելու համար կարևոր ունակությունների:

Մայրենի լեզվի քերականության յուրացումը նպաստում է նաև աշակերտների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության և լեզվամտա-ծողության զարգացմանը. լեզվական իրողությունների յուրացման գործընթացում երեխաներն իրականացնում են այնպիսի տրամաբանական գործողություններ, ինչպիսիք են վերլուծությունն ու համադրումը, դրանց հիման վրա գտնում են լեզվական երևույթների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանուրությունները, կատարում են դատողություններ, փորձում են ընկալել բազմաթիվ վերացական երևույթներ:

Այս ամենը զարգացնում է երեխաների մտածողությունը, այդ թվում նաև՝ վերացական մտածողությունը, որը ճանաչողության բարձրագույն աստիճանն է:

Հայոց լեզվի մեթոդիկայի խնդիրն է, մայրենի լեզվի ուսուցումը դարձնել զարգացնող, այնպես կազմակերպել ուսուցումը, որ կոնկրետից վերացականին անցումը դառնա սահուն, ուսումնասիրվող նյութն աշակերտներն իսկապես հասկանան և կիրառեն իրենց խոսքում: Այս խնդիրները կլուծվեն միայն այն դեպքում, երբ ընտրված ուսուցման մեթոդների և երեխայի զարգացման առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող կապերն ուսուցիչը հաշվի առնի դասի գործընթացում, որոշի այն օրինաչափությունները, որոնք ընկած են մայրենի լեզվի ուսուցման գործընթացի հիմքում: [6, էջ 200]

Խոսելով մայրենի լեզվի տարրական դասընթացում քերականության ու կենդանի լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող աշխատանքների տեղի, դերի ու համամասնության մասին՝ հայ նշանակավոր քերականագետ Ստ. Պալասանյանը միանգամայն ճիշտ կերպով գտնում էր, որ հենց սկզբից և եթ դրանք միաժամանակ տարվել չեն կարող, կենդանի լեզվի ուսուցումը անպայման պետք է նախորդի քերականության ուսուցմանը, որպեսզի անհրաժեշտ լեզվական հիմք ստեղծի նրա ըմբռնման համար: «Մայրենի լեզվի ուսուցումը, անշուշտ, պետք է սկսել «մայրենի խոսուն բարբառից»,- ասում էր Ստ. Պալասանյանը,- որովհետև կենդանի լեզուն է այն միակ հաստատ հիմքը, որի վրա պիտի բարձրանա կանոնավոր դաստիարակության շենքը»: [12, Ե]

Քերականության տարրական դասընթացում հայոց լեզվի ուսուցման գործընթացում ուսուցիչը պիտի որոշի ոչ միայն այն, թե ինչպիսի աշխատանք պիտի կատարեն ինքն ու աշակերտները, այլև՝ այն մեթոդներն ու հնարները, որոնք արդյունավետ են քերականության, առանձնապես ձևաբանության ուսուցման գործընթացում: Պիտի կարևորել ոչ միայն դիդակտիկ նյութերի ու լեզվական խաղերի դերը, այլև այն, թե ինչ չափաբաժնով և երբ դրանք պետք է օգտագործվեն:

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում պիտի նախատեսել ուսուցումը հետաքրքրաշարժ, ինքնուրույն, ստեղծագործական, երևակայական դարձնող, աշակերտների ակտիվությունը բարձրացնող հնարներ: [6, էջ 186]

Հրապարակի վրա բավականաչափ ուսումնասիրություններ կան մեր քերականության՝ տարրական դասընթացի ստեղծման ու մշակման գործում, դրանց օրինաչափությունների և ուսուցման վերաբերյալ: Նշանավոր քերականներ ու մանկա-վարժներ՝ Ա. Տեր- Գրիգորյանի, Գ. Էդիլյանի, Ս.Գյուլբուդաղյանի, Ստ. Պալասանյանի, Ն. Տեր- Ղևոնդյանի, Ա.Բահաթրյանի, Ն.Մելիք-Թանգյանի, Հ. Աբեղյանի, Հար.Թումանյանի, Մ.Աբեղյանի, Հ.Դաղբաշյանի և այլոց ուսումնասիրությունները նվիրված են տարրական դասարաններում քերականության դասընթացի ձևավորման և ուսուցման մեթոդական առանձնահատկություններին:

Քերականության տարրական դասընթացի ձևավորման գործում, անկասկած, քիչ դեր չեն խաղացել նաև մեր դպրոցի զարգացման տարբեր փուլերում կազմված հայոց լեզվի ծրագրերը, որոնք ուրվագծել են դասընթացի սահմանները, նրա ընդգրկած նյութերի ծավալն ու խորությունը: Այդ ծրագրերից յուրաքանչյուրը մեր դպրոցի ու մանկավարժական մեթոդական մտքի զարգացման պատմական կոնկրետ մի

ժամանակաշրջանի արտահայտությունն է եղել՝ իր վրա կրելով տվյալ ժամա-նակաշրջանի հայ դպրոցի առջև դրված ուրույն խնդիրների ու մանկավարժական – մեթոդական մտածողության որոշակի կնիքը: Այսպիսով՝ քերականական տարրական գիտելիքները մայրենի լեզվի տարրական դասընթացի բաղկացուցիչ մասերից մեկն է և առանց նրա չի կարելի պատկերացնել լեզվի ուսուցումը:

2. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐԲԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Քերականության ուսուցումը տարրական դասարաններում շատ բանով նման է գրաճանաչության ուսուցմանը: Երեխան ամեն օր իր շուրթերին ու ականջներում հնչող կենդանի, հարազատ ու հասկանալի մայրենի լեզվի մեջ գրաճանաչության ընթացքում բոլորովին նորն է «հայտնաբերում» ու գիտակցում, որոնց գոյության մասին նա մինչ այդ ոչ մի գաղափար չի ունեցել՝ չնայած այն բանին, որ դրանք նրանից անկախ միշտ էլ գոյություն են ունեցել նրա իսկ խոսքի մեջ: Երեխաների համար ամեն ինչ նոր արժեք է ստանում, որովհետև անհրաժեշտ է լինում ինչ-որ չափով նրանց ուշադրությունը շեղել բառերի ու խոսքի կոնկրետ իմաստից, նրանց բառային կամ սովորական խոսակցական արժեքից, որպեսզի հնարավոր լինի առաջին պլանի վրա դնել նրանց լեզվական արժեքը, նրանց ուշադրությունը բևեռել դրանց քերականական իմաստի վրա:

Ինչպես Գ. Էդիլյանն է գրում. «Լեզվական դատողությունների նպատակը չէ միայն ճանաչել առանձնակի փաստը, այլ փաստերից եզրակացնել քերականական գաղափարներ և կանոններ՝ այդ փաստերը վերլուծելով (անալիզի), նմանությունները գտնելով (սինթեզ), այդ նմանությունները ձևակերպելով իբրև գաղափար կամ կանոն (ինդուկցիա), այնուհետև նոր օրինակների օգնությամբ հաստատելով գաղափարի կամ կանոնի ճշտությունը (դեդուկցիա): Այս աշխատանքի շնորհիվ աշակերտի մեջ զարգանում է վերացական մտածողությունը և գիտական հետազոտման մեթոդները գիտակից գործադրելու վարժությունը»: [9, էջ 93]

Քերականական հասկացությունների ուսուցումը տարրական դպրոցում ուսուցչից պահանջում է լուրջ նախապատրաստություն, որովհետև դրանք վերացական են, իսկ կրտսեր դպրոցականների վերացական մտածողությունն անբավարար է զարգացած: Քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում երեխաները սովորում են՝

ա/առանձնացնել բառի մեջ եղած հնչույթները,

բ/ընկալել բառի ձևաբանական կառույցը, նրա յուրաքանչյուր մասի նշանա-կությունը,

գ/ գիտակցել բառը՝ որպես ինքնուրույն խոսքային միավոր,

դ/ ձեռք բերել անհրաժեշտ բառամթերք:

ե/ ըմբռնել և խոսքում գործածել նախադասությունը, դրա տարատեսակները:

Հանրահայտ Է, որ լեզվական հաղորդակցման բացակայությունը կամ անբա-վարար հաղորդակցումը լուրջ խոչընդոտ են դառնում խոսքի զարգացման և քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում: Երբ քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացն իրականացվում է պարզապես կանոններ և սահմանումներ անգիր անելու և վերարտադրելու ճանապարհով, քերականական նյութի յուրացումը դառնում է ձևական և անարդյունավետ, այսինքն՝ չի նպաստում բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը: Հաճախ կարելի է դասալսումների ժամանակ /պրակտիկայի ընթացքում/ հանդիպել երեխաների, որոնք անսխալ վերարտադրում են բոլոր քերականական սահմանումները, սակայն այդ նույն սահմանման կիրառման վերաբերյալ առաջադրված վարժությունը չեն կարողանում կատարել: Երեխաները հիշում են և կրկնում սահմանումը՝ առանց նրա էությունը հասկանալու: Արդյունքում՝ երեխաներն իրենց բանավոր և գրավոր խոսքում թույլ են տալիս լեզվական սխալներ, վրիպումներ հենց այն կանոնների վերաբերյալ, որոնք անգիր վերարտադրում են յուրաքանչյուր դասին: Այս համատարած երևույթի պատճառն առաջին հերթին քերականական գիտելիքների յուրացման գործընթացի սխալ կազմակերպումն է, մանավանդ ձեռք բերած գիտելիքները կարողությունների և հմտությունների վերածման ճանապարհին, որի հետևանքով լեզվական նյութի յուրացումը դառնում է **ձևական**, ոչ հիմնավոր: Հիմնավոր ուսուցման համար անհրաժեշտ են երկու պայման.

1. առարկային վերաբերող գիտելիքներ,
2. դրանք կիրառելու կարողություններ:

Առարկայի իմացությունը չի նշանակում նրա պասիվ ընկալումը, այլ նրա ինքնագործ յուրացումը: Արդեն այդ դրույթի մեջ կա այն ճշմարտությունը, որ այդ կրթությունն իմացությունից առանձնացված չէ, այլ այդ ճիշտ իմացությունը պետք է միանա կարողությանը, այսինքն՝ այն կիրառելու և օգտագործելու հմտությանը:

Լեզվական նյութի յուրացումը տարրական դպրոցում աշակերտների համար բարդ է նաև այն պատճառով, որ երեխաները սահմանումը սովորում են ոչ թե լեզվական երևույթն ուսումնասիրելուց, նրա առանձնահատկությունները դիտար-կելուց հետո, այլ նախ անգիր են սովորում սահմանումները, ապա՝ գրքում տրված օրինակները վերարտադրում են նույնությամբ, առանց դրանց մեջ խորանալու: Երբեմն էլ սահմանումն այնպես պարզունակորեն է ուսուցանվում, լեզվական երևույթը մեկնաբանվում պատահական, ոչ էական հատկանիշներով, որ երեխաներն ամբողջական պատկերացում չեն կարողանում կազմել լեզվական տվյալ իրողության մասին: Քերականական նյութի յուրացումը դժվարանում է և շուտ մոռացվում նաև այն պատճառով, որ ամրակայման նպատակով իրականացվող կրկնությունները կայուն կապեր չեն ստեղծում անցածի, յուրացրածի հետ, ինչպես նաև երեխաները դրանք չեն կիրառում խոսքում: Ժամանակակից մեթոդիկան առաջարկում է քերականական նյութի յուրացման ակտիվ, փոխներ-գործուն, գործնական մեթոդներ, որոնք նպաստում են նյութի յուրացմանը, կիրառ-մանն ու հետագայում դրանց հիման վրա նոր գիտելիքների ձեռքբերմանը:

Այսպիսով լեզվական գիտելիքների յուրացման գործընթացի նկատմամբ այսպիսի մոտեցման պայմաններում քերականության ուսումնասիրումը դառնում է ոչ թե նպատակ, ոչ թե տեսական գիտելիքների սերտման գործընթաց, այլ բանա-վոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորման և զարգացման միջոց: Մեր աշխատանքի ընթացքում աշխատել ենք այս թերությունների վերացման ուղղությամբ:

Ինչպես նշեցինք, լեզվական տարրական գիրելիքների ուսուցումը կրտսեր դպրոցում իրականացվում է վերլուծական-համադրական մեթոդով, ինչպես նաև համագործակցային և ինտերակտիվ մեթոդներով: Վերլուծական-համադրական մեթո-դով լեզվական տարբեր թեմաների ուսուցման ժամանակ վերլուծվում են լեզվի մեջ գոյություն ունեցող բազմաթիվ և բազմաբնույթ երևույթները, դրանց առանձնահատ-կությունները, բացահայտվում են բառի, նրա կազմության, կրած փոփոխությունների օրինաչափությունները, նախադասության մեջ և խոսքում ունեցած դերը, ապա ամփոփում և ամբողջանում են կատարված դիտարկումները: Վերլուծական-համադ-ական մեթոդը լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում արդյունավետ և շատ կարևոր է, քանի որ նպաստում է աշակերտների մտածողական ակտիվության բարձրացմանը: Այս դեպքում

աշակերտները ոչ թե լեզվական նյութը կընկալեն մեխանիկորեն, այլ տարաբնույթ տրամաբանական-մտածողական գործու-նեության ճանապարհով:

Այսպես՝ լեզվական նոր գիտելիքի ձեռքբերման գործընթացում աշակերտը վերլուծություն է կատարում, համեմատում է ուսումնասիրվող երևույթների և առարկաների ու գործողությունների անվանումները ու դրանց միջև գտնում ընդհանրություններ, տարբերություններ և որոշակի եզրակացությունների է հանգում, կատարում պարզ դատողություններ: Այն ուղին, որն անցնում է աշակերտը, նրա մտավոր գործունեության ճանապարհի ինդուկցիոն հատվածն է՝ մասնակի, առանձին փաստերից դեպի ընդհանուր, ամփոփիչ հասկացությունը, դեպի եզրակացությունը տանող ընթացքը: Ինդուկցիոն այս փուլն ակտիվացնում է երեխաների մտածողությունը, և ոչ միայն իրենք հայտնաբերում են գիտելիքը, այլև ամփոփում են այն: Սակայն երբ կատարվել է եզրակացություն, տրվել է սահմանումը, ճանաչողության ուղին պիտի շարունակվի, որի համար աշակերտը պետք է անցնի մի նոր՝ այս անգամ արդեն ընդհանուրից դեպի մասնավոր փաստերը գնացող ճանապարհ, որը դեդուկտիվ ուղին է:

Օրինակ՝ թվական անվան սահմանմանը երեխաները հանգում են դիտումների, վերլուծությունների ճանապարհով (ինդուկցիա), իսկ հետո այդ սահմանման յուրացման գիտակցականությունն ստուգվում է խոսքի, նախադասության, նրա առանձին բառերի վերլուծության, ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու միջոցով (դեդուկցիա): [6, էջ 221]

Հայոց լեզվի քերականության ուսուցման մեթոդիկայի մշակման ասպարեզում մեծ ավանդ ներդրած հայ մանկավարժ Ա. Բահաթրյանը քերականական նյութի յուրացման գործընթացում կարևորում էր ուսուցման եղանակը և մասնավորապես լեզվական նախնական գիտելիքների ուսումնասիրման փուլի համար նշում էր, որ «քերականու-թյունը միշտ և անհապաղ պիտի հառաջ ածվի, հանվի լեզվից և ոչ երբեք՝ լեզուն քերականությունից ... Ուր կարելի է լեզվի կանոնները չպիտի տրվեն երեխաներին, այլ նրանք ուսուցչի առաջնորդությամբ իրենք պիտի գտնեն այդ կանոնները: Նույնանման և համասեռ երևույթները միմյանց հետ բաղդատելով՝ ակնհանդիման կացուցանել և գտնել տալ կանոնը, դա է ժողովրդական դպրոցների համար միակ ուղիղ ճանապարհը»: [5, էջ 58-59] Մեծ մանկավարժի մեթոդական մտահանգումն այսօր ևս արդիական է և այն անտեսել չի կարելի:

Մեր ավարտական աշխատանքը գրելու ընթացքում նկատեցինք, որ լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում ուսուցիչը մեծ դեր պետք է տա լեզվական

վարժություններին և լեզվական խաղերին՝ աստիճանաբար նվազեցնելով իր անմի-ջական մասնակցությունն այդ գործընթացներին: Ավելի հաճախակի պետք է կազմա-կերպի ինքնաստուգումներ, փոխադարձ ստուգումներ, օգնի երեխաներին ինքնուրույն խոսք կառուցել և նկատել իրենց թույլ տված լեզվաոճական սխալները, շտկել դրանք ինքնուրույնաբար՝ կիրառելով համագործակցային և փոխգործուն մեթոդները:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու համար: Աշակերտներից յուրաքանչյուրը հնարավո-րություն է ստանում ներկայացնել իր տեսակետը և ծանոթանալ մյուսների տեսակետների հետ: Այս կերպ նրանք սովորեցնում եմ իրար և սովորում իրարից: Այս դեպքում միահյուսված կիրականացվեն ստեղծագործական մտածողությունը, անձնային որակները՝ արագությունը, ճկունությունը, ինքնատիրապետությունը:

Փոխգործուն մեթոդը ենթադրում է համատեղ գործունեության կազմակերպում և իրականացում: Ընկերների հետ փոխադարձորեն շփվելը, մտքեր կիսելը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա լսել ուրիշների կարծիքը, ասել իր սեփական մտքերը և հետզհետե ստանալ այն կտավը, որ ստեղծվում է ուսման և կենսափորձի միջև: Եթե ուսուցիչը հարգի և գնահատի աշակերտների մտքերն ու պատկերացումները, նրանք շատ ավելի մեծ պատասխանատվությամբ և զգուշությամբ կմոտենան սեփական մտքի արդյունքին:

Այս մեթոդներով լեզվական տարրական գիտելիքների ուսուցման ընթացքում իրականացվում է այն պարզ ու մատչելի լեզվական հասկացությունների յուրացումը, որոնք անհրաժեշտ են երեխաներին՝ բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողության ձևավորման, լեզվամտածողության զարգացման համար:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման այս փուլում երեխաները պետք է՝ գիտելիքներ ձեռք բերեն բառակազմությունից, ձևաբանությունից և շարահյու-սությունից, դրանց հիման վրա՝ ուղղագրական որոշակի կարողություններ և հմտություններ:

- Ունենան շրջակա աշխարհը և նրա հետ իրենց փոխհարաբերությունները ներկայացնող խոսք կառուցելու համար անհրաժեշտ բառապաշար, բանավոր ու գրավոր խոսք կառուցելու կարողություններ:

- Կարողանան բանավոր և գրավոր խոսքում օգտագործել ինչպես պարզ ընդարձակ, այնպես էլ բարդ նախադասություններ, ունենան մտահաղորդակցական կարողու-թյուններ, որոշակի մակարդակով ձևավորված լեզվամտածողություն և քննադատական մտածողություն:
- Պատրաստ լինեն ուսուցման հաջորդ փուլում համակարգված քերականության ուսումնասիրմանը:

Ուսուցման այս փուլում հիմնավոր աշխատանք է տարվում նաև ձեռք բերված լեզվական գիտելիքները կապակցված խոսքում օգտագործելու ուղղությամբ: Այդ ընթացքում հիմնական ուշադրությունը բևեռվում է մենախոսություն կառուցելու կարողության ձևավորման վրա. նկարի շուրջ պատմություն հյուսել, ներկայացնել տեսածը, լսածը, պատմել կամ վերապատմել ապրածը, իր փորձը, ընթերցած ստեղծագործությունը, շարադրել ինչպես սեփական ապրումները, այնպես էլ ուսուցչի ընթերցածը (գրել փոխադրություն): Նշված կարողությունների մեջ լեզվական գիտելիքները հանդես են գալիս կարողությունների և ունակությունների մակարդակում, տարրական դպրոցում քերականության ուսուցման գործընթացից պետք է բացառել տեսական գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում քերականության, տվյալ դեպքում ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցումը թեմայի շուրջ կատարած մեր ուսումնա-սիրութունները մեզ բերել են հետևյալ եզրակացությունների.

Քերականությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն բաժիններից մեկն է և կրթադաստիարակչական մեծ ու անփոխարինելի նշանակություն ունի ապագա քաղաքացու գրագիտության մակարդակի ապահովման գործում: Ուսուցման գործընթացը գիտակցական դարձնելու ճանապարհով միայն կարելի է վստահ լինել, որ ձևավորված են բանավոր ու գրագետ խոսք կառուցելու համար անհրաժեշտ նախադրյալները: Այսինքն՝ «Քերականություն» եզրույթը մենք այստեղ օգտագործում ենք պայմանականորեն՝ այս բառի մեջ ընդգրկելով նաև հնչյունա-բանությունից, բառագիտությունից, բառակազմությունից և քերականությունից՝ ձևա-բանությունից և շարահյուսությունից մատչելի գիտելիքները:

Հետազոտական աշխատանքի ժամանակ մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցումն ամենից առաջ և ամենից շատ կապվում են գործնական աշխատանքների, աշակերտների գրելու, խոսելու գործողության տևական վարժությունների հետ: Այս կապակցությամբ կատարված տեսական տեղեկություններն ու կանոնարկումները ևս այնքանով են արժեքավորվում, որքանով որ կապվում են պրակտիկ գործողությունների հետ, գիտելիքներից վերածվում են կարողությունների կամ զուգորդվում են համապատասխան կարողությունների հետ: Այս դրույթից ելնելով՝ աշխատել ենք ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցումը կապել գործնական աշխատանքի հետ, մեր տեսական եզրակացությունները ստուգել ու ճշտել ենք փորձնական ճանապարհով:

Փորձարարական աշխատանքները անցկացվել են մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում: Ամբողջ ուսումնառության ընթացքում հետևել ենք տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսուցման աշխատանք-ներին՝ այդ բնագավառում եղած լավն ու դրականը վերցնելու, թերություններն ու սխալները հաղթահարելու, ուսուցման նոր, արդյունավետ ձևեր առաջադրելու առումով:

Մանրամասն ուսումնասիրելով գործնական աշխատանքի տվյալները, գործունեության մեջ եղած ուսումնական նյութերը, տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրերը, դասագրքերն ու մեթոդական գրականությունը, այդ թվում նաև ձևաբանական գիտելիքների ուսուցման վերաբերյալ մեթոդիկայի պատմությունը, `մեր ձեռքի տակ անհրաժեշտ հիմքեր ունեցանք ձևաբանական ուսուցման հարցերը բարելավելու համար:

Աշխատանքի շարադրման ամբողջ ընթացքում աշխատել ենք իրականացնել մեր առջև դրված հետևյալ խնդիրները՝

1. Ներկայացրել ենք քերականության տեղն ու դերը հայոց լեզվի տարրական ուսուցման համակարգում:
2. Ուսումնասիրել ենք լեզվական տարրական գիտելիքների ուսուցման մեթոդներն ու եղանակները:
3. Տվել ենք խոսքի մասերի ուսուցումը՝ գոյական անվան, բայի, ածական անվան, թվականի, անձնական դերանվան, դրանց որոշ առանձնահատկությունների ուսուցումը:
4. Խոսքի մասերի ուսուցումն այնպես ենք կազմակերպել, որ նպաստեն աշակերտների բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը:
5. Ուսուցման այս փուլում հիմնավոր աշխատանք ենք տարել ձեռք բերված լեզվական գիտելիքները կապակցված խոսքում օգտագործելու ուղղությամբ:
6. Ուսուցման ընթացքում մեծ տեղ ենք տվել գործնական աշխատանքների կատարմանը:

Գործնական աշխատանքի տվյալները հավաքել ենք դասալսումների, գրավոր աշխատանքների և ուսուցիչների ու աշակերտների հետ անցկացված զրույցների միջոցով: Այսպիսով՝ այդ ուսումնասիրության արդյունքներն ունեցել են ինչպես գործնական այնպես էլ տեսական նշանակություն՝ ձևաբանական ուսուցման աշխա-տանքներն է՛լ ավելի նպատակային դարձնելու համար:

Նշենք այն հիմնական մեթոդական ձևերն ու եղանակները, որոնք ուսում-նասիրվել և գործադրվում են տարրական դասարաններում:

- **Ձևաբանական գիտելիքների վերլուծություններ և համադրություններ:**

Ընդհանրապես ձևաբանական գիտելիքների ուսուցման համար խիստ օգտակար ու արդյունավետ պետք է համարել բառային նյութի վրա տարվող ինքնուրույն,

ստեղծագործական աշխատանքը, երբ աշակերտն այդ բառանյութը տարբեր փոփոխությունների է ենթարկում, օրինակ գոյականին ավելացնելով **ել, ալ** վերջավորությունները ստանում է բայեր, օրինակ՝ նկար-նկար**ել**, կամ ածանցներ և ստանում ածականներ, օրինակ՝ մազ-մազ**ոտ**, այսինքն դրանցից նոր բառեր են ձևավորում, օգտագործում բառակապակցությունների և նախադասությունների մեջ, վերլուծություններ ու համադրություններ է կատարվում:

- **Բառակապակցությունների ու նախադասությունների կազմում** ձևաբանական գիտելիքների օգտագործումը խոսքի մեջ: Ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցման այս ձևը համեմատաբար բարդ է և շատ ավելի աշխատատար՝ աշակերտից լեզվական որոշակի պաշարի ու կարողությունների պահանջարկով, սակայն կրթադաստիրակչական իր հնարավորություններով շատ ավելի բարձր է, հետևաբար, ավելի հանձնարարելի: Մեր ուսումնասիրությունների արդյունքում նկատեցինք, որ աշակերտների որոշակի մաս այս վարժությունները կատարում են հաջողությամբ, ինքնուրույնության որոշակի դրսևորումով:
- **Աշակերտներն ամենից հաջող կազմում են հատկանիշ-առարկա** կապակցությամբ բառակապակցություններ, իսկ նախադասություններում առաջադրված բառերն օգտագործում տարբեր դիրքերում ու տարբեր ձևափոխություններում /հոլով, խոնարհում/: ԸՆդհանուր առմամբ այս վարժությունները տարրական դասարաններում օգտակար են, գործադրելի և զարգացնող:
- Դասալսումների ընթացքում մենք համոզվեցինք, որ ձևաբանանական գիտելիքների ուսուցումը շատ հաջողված է **խոսքիմասային անցումների ուսուցմամբ:** Երեխաները գոյականից ստանում են ածական ու բայ, բայից՝ ածական և գոյական, ածականից՝ բայ ու գոյական, և այդ անցումներն ավելի որոշակի են դարձնում նրանց գիտելիքները խոսքի մասերի վերաբերյալ, նրանք ավելի ակնառու են տեսնում դրանց նմանություններն ու տարբերությունները: Գործնականորեն յուրացնելով լեզվական այդ հասկացությունները՝ հետագայում նրանք ավելի դյուրությամբ դրանք կյուրացնեն տեսականորեն:

Պրակտիկայի ժամանակ /Գյումրու թիվ 41 դպրոց, դասվար՝ Մելքոնյան Վիկտորյա, 30 աշակերտ, թիվ 21դպրոց, դասվար՝ Խաչատրյան Ազնիվ, 30 աշակերտ, թիվ 23 դպրոց, դասվար՝ Հովհաննիսյան Մարգարիտա, 35 աշակերտ / մենք հադիպեցինք այնպիսի երեխաների, որոնք անսխալ վերարտադրում էին բոլոր քերականական

սահմանումները, սակայն այդ նույն սահմանման կիրառման վերաբերյալ առաջադրված վարժությունը չէին կարողանում կատարել: Այսինքն կան երեխաներ, որոնք հիշում և կրկնում են սահմանումը՝ առանց նրա էությունը հասկանալու: Մենք եկանք այն համոզման, որ այս երևույթի պատճառը քերականական գիտելիքների յուրացման գործընթացի սխալ կազմակեպումն է: Դրա համար ժամանակակից մեթոդիկան մեզ առաջարկում է քերականական նյութի յուրացման ակտիվ, փոխներգործուն, գործնական մեթոդներ, որոնք իրոք նպաստում են նյութի յուրացմանն ու արդյունավետությանը:

Անշուշտ, դպրոցում գործադրվող ձևաբանական գիտելիքների ուսուցման աշխատանքի ձևերն ավելի շատ ու բազմազան են, քան այստեղ տրվեց, սակայն հնարավոր չէ բոլորը ներկայացնել:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, 1909, էջ 69
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», հրատ., 1965թ., 699 էջ:
3. Աբրահամյան Ս.Գ., ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, «Լույս» հրատ., 1969, 420 էջ:
4. Աղայան Դ., Երկեր, 4-րդ հատոր, «Լույս» հրատ., Երևան 1963, 326 էջ:
5. Բահաթրյան Ա., «Մանկավարժական թերթ», 1878, թիվ 4, 196 էջ:
6. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2009, 349 էջ:
7. Գյուլբուդաղյան Ս.Վ., Հայոց լեվի դասավանդման մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան, 1987, 336 էջ:
8. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4», «Էդիթ պրինտ» հրատ., Երևան, 20012, 175 էջ:
9. Էդիլյան Գ., Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923, 231 էջ:
10. Ղարիբյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1953, 385 էջ:
11. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, ՀՀ կրթության և գիտության նախարարի 23. 11. 2011թ. Թիվ 1153-Ա/ք հրամանի, էջ 20-23, 34-66.
12. Պալասանյան Ստ., Քերականության մայրենի լեզվի, մասն Ա.,Բ.,Գ., հինգերորդ տիպ, Թիֆլիս 1906, էջ Ե:
13. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Եր., «Մակմիլան-Արմենիա» հրատ., 2011, 159 էջ;
14. Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, «Լույս» հրատ., 1977, 317 էջ:
15. Տեր-Գրիգորյան, Քերականության մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1977, 274 էջ:

16. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Երևան, 1980, 563 էջ: